

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությունը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարություն: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

**1** Ո՞ր միջատներն են զարգանում թերի կերպարանավոխությամբ.

- 1) մոծակները
- 2) մրջունները
- 3) մեղոները
- 4) մորեխները

**2** Ո՞ր ուկորն է քացակայում գորտի կմախքում.

- 1) կոնքոսկրը
- 2) կողոսկրը
- 3) պարանոցային ողը
- 4) բազուկոսկրը

**3** Ի՞նչը բնորոշ չէ քոչունների արյունատար համակարգին.

- 1) առտայի աջակողմյան աղեղի առկայությունը
- 2) աջ փորոքից սկիզբ է առնում արյան շրջանառության փոքր շրջանը
- 3) ձախ փորոքից սկիզբ է առնում արյան շրջանառության մեծ շրջանը
- 4) ձախ նախարտում ավարտվում է արյան շրջանառության մեծ շրջանը

**4** Ինչո՞վ են սնկերը նման բույսերին.

- 1) ունեն լավ արտահայտված քջապատ
- 2) զուրկ են քլորոֆիլից
- 3) կուտակում են զլիկոզեն
- 4) արտազատում են միզանյոթ

**5** Ի՞նչ առանձնահատկություններ են բնորոշ երկաքիլավոր բույսերի դասի ներկայացուցիչների մեծ մասին.

- 1) տերևների աղեղնաջիղ ջղավորություն
- 2) տերևների զուգահեռաջիղ ջղավորություն
- 3) առանցքային արմատային համակարգ
- 4) փնջածն արմատային համակարգ

**6** Ինչո՞վ (ինչպե՞ս) է շնչում հիդրան.

- 1) մարմնի ամբողջ մակերեսով
- 2) թույլ զարգացած խոիկներով
- 3) տրախեաներով
- 4) պարկանման թոքերով

7

**Թվարկված կենդանիներից ո՞րը չի պատկանում ժապավենաձև որդերի դասին.**

- 1) խողի երիզորդը
- 2) եզան երիզորդը
- 3) էլիփոնկը
- 4) սրատուտը

8

**Ի՞նչ նյութեր է պարունակում առողջ մարդու առաջնային մեզը.**

- 1) պլազմայի որոշ բաղադրիչներ՝ միզագոյացումը կարգավորող հորմոններ, հակամարմիններ, միզանյոթ
- 2) միայն պլազմայի անօրգանական բաղադրիչներ
- 3) գլյուկոզ, միզանյոթ, միզաթթու, այլ օրգանական նյութեր և հանքային աղեր
- 4) պլազմայի բոլոր բաղադրիչներն առանց բացառության

9

**Ո՞ր պնդումն է սխալ մարդու լեյկոցիտների վերաբերյալ.**

- 1) մեծ քանակությամբ կան թարախում
- 2) ունեն կորիզ, առաջանում են կարմիր ոսկրածուծում
- 3) քանակը կարող է ավելանալ սնունդ ընդունելիս
- 4) չափսերով ավելի փոքր են, քան էրիթրոցիտները

10

**Մարդու ո՞ր անոթներում է երակային արյունը վերածվում զարկերակայինի.**

- 1) արյան շրջանառության մեծ շրջանի մազանոթներում
- 2) արյան շրջանառության փոքր շրջանի մազանոթներում
- 3) օրգանիզմի բոլոր մազանոթներում և զարկերակներում
- 4) բոքային զարկերակներում և արյան շրջանառության մեծ շրջանի մազանոթներում

11

**Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B<sub>12</sub>-ի վերաբերյալ.**

- 1) ջրալույծ է, ավիտամինոզի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 2) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինոզի դեպքում խթանվում է ռողոսվահնի սինթեզը
- 3) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է
- 4) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում են մաշկի և լորձաբաղանթների խոցեր, ճարպալույծ է

12

Ո՞ր օրգանին է հարում մարդու ենթաստամոքսային գեղձի պոչային հատվածը.

- 1) փայծաղին
- 2) լյարդին
- 3) տասմերկումատնյա աղուն
- 4) ստամոքսին

13

Ի՞նչ դեր է կատարում լեղին մարդու օրգանիզմում.

- 1) արգելակում է մարսողական ֆերմենտների արտադրությունը
- 2) նապաստում է ճարպերի էմուլսացմանը և ներծծմանը
- 3) բուլացնում է աղիների շարժողական ակտիվությունը
- 4) խթանում է նեխուման գործընթացները

14

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում միջավայրում ջերմաստիճանի անկման դեպքում.

- 1) աճում է արյան հոսքը դեպի մաշկ, իսկ մարմնի ջերմատվությունը նվազում է
- 2) լայնանում են մաշկի արյան անոթները և մեծանում է այնտեղ մղվող արյան քանակը
- 3) մաշկի արյան անոթները լայնանում են, արյան հոսքը արագանում է, մարմնի ջերմատվությունը մեծանում է
- 4) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը, նվազում է մարմնի ջերմատվությունը

15

Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում պայմանական ռեֆլեքսների կենտրոնները.

- 1) գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում
- 2) ողնուղեղային հանգույցներում
- 3) վեգետատիվ նյարդային համակարգի հանգույցներում
- 4) ողնուղեղի գորշ նյութի հետևի եղջյուրներում

16

Մարդու օրգանիզմում ո՞ր գործառույթներն (գործառույթներն) են դեկավարում կամքում գտնվող կենտրոնները.

- 1) ջերմակարգավորում
- 2) կլլում
- 3) օրգանիզմի մերքին միջավայրի հաստատումության պահպանում
- 4) ակնազնդերի և դիմախաղի մկանների շարժումներ

17

Մարդու զգայարանների ո՞ր կառույցներում չկան ընկալիչներ.

- 1) ձվածև (օվալածև) և կլոր պատուհաններում
- 2) կլոր և ձվածև պարկիկներում
- 3) քթի և բերանի խոռոչների պատերին
- 4) խխունջում և կիսաբոլոր խողովակներում

18

Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում պրոկարիոտներին.

- 1) անգինայի
- 2) խոլերայի
- 3) որովայնային տիֆի
- 4) պոլիոմիելիտի

19

Բջջի օրգանոփաներից քաղանթային կառուցվածքը չունեն.

- 1) բջջային կենտրոնը և լիզոսոմները
- 2) ոիբրոսոմները և բջջային կենտրոնը
- 3) վակուոլները և լիզոսոմները
- 4) ոիբրոսոմները և գոլջիի ապարատը

20

Ի՞նչ է զարգանում սերմնասկզբնակից ծաղկավոր բույսերի կրկնակի բեղմնավորումից հետո.

- 1) պտուղը
- 2) պտղապատը
- 3) սերմը
- 4) սերմնամաշկը

21

Ո՞ր ածխաջուրն է պատկանում մոնոսախարիդներին.

- 1) գլիկոգենը
- 2) ցելյուլոզը
- 3) օսլան
- 4) գալակտոզը

22

Ո՞ր ասիտակուցն է մտնում միկրոխողովակների կազմության մեջ.

- 1) կոլագենը
- 2) սուրուլինը
- 3) միոգինը
- 4) ֆիբրինը

23

Ինչո՞ւ է գենետիկական կողը համարվում միանշանակ և ունիվերսալ քանի որ՝

- 1) գեների միջև կան «ընդհատումներ»
- 2) միևնույն ամինաթրուն կարող է գաղտնագրվել մեկից ավելի եռյակներով
- 3) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթրուն
- 4) յուրաքանչյուր նուկլեոտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում

24

Ի՞նչ գործընթաց կարող է տեղի ունենալ նիտրիֆիկացման ընթացքում.

- 1) սպիտակուցի քայքայում՝ ամոնիակի առաջացումով
- 2) ազոտական թթվից ազոտային թթվի առաջացում
- 3) ամոնիակի օքսիդացում մինչև ազոտային թթու
- 4) ազոտական թթվի վերականգնում մինչև ամոնիակ

25

Ի՞նչ առանձնահատկություն ունեն գորտի բլաստոլի քջիջները ութքջային փուլում.

- 1) նման են դեղնուցի քանակով, բայց չունեն ԴՆԹ և ՌՆԹ
- 2) տարբեր են կառուցվածքով, բայց նման են դեղնուցի քանակով
- 3) տարբերակված են
- 4) տարբերվում են չափսերով

26

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) սեռական քրոմոսոմների նույն լոկուսներում գտնվող գեները
- 2) հոմոլոգ քրոմոսոմների տարբեր գույգերում գտնվող գեները
- 3) մեկ քրոմոսոմում գտնվող գեները
- 4) առատոսոմների տարբեր գույգերում գտնվող գեները

27

Ի՞նչ է ալեյոտրոպիան.

- 1) միջանկյալ ժառանգման երևույթ
- 2) գեների բազմակի ազդեցություն
- 3) էպիստազ
- 4) գերդոմինանոտություն

28

Ո՞ր կենդանիների սեռական տարրերակումն է կախված արտաքին միջավայրի ջերմաստիճանից.

- 1) մողեսների
- 2) կոկորդիլոսների
- 3) մեղուների
- 4) մրջյունների

29

Ի՞նչ է ստացվում երկինտերոգիզոտ առանձնյակի և հոմոզիգոտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելներից մեկի ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 2) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային ձևեր
- 3) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 4) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր

30

Մարդու ո՞ր հիվանդության պատճառն է առոտոսմներում գտնվող մուտանտ դրմինանտ գենը.

- 1) ֆենիլկետոնուրիայի
- 2) Քլայնֆելտերի սինդրոմի
- 3) ալբինիզմի
- 4) Մարֆիանի սինդրոմի

31

Ի՞նչ տիպի գամետներ կառաջացնի մուգ մարմին և սաղմնային թևեր ունեցող դրոզոֆիլ պտղածանձը.

- 1) AB, aB
- 2) Ab, aB
- 3) ab
- 4) AB

32

Ինչպես է կոչվում փոխհարաբերությունների այն ձևը, որի դեպքում տեսակներից միայն մեկն է օգուտ ստանում՝ առանց վնասելու մյուս տեսակին.

- 1) կոմենսալիզմ
- 2) մուտուալիզմ
- 3) ամենսալիզմ
- 4) կոռպերացիա

33

Ո՞ր պնդումն է ճիշտ գիշատչության վերաբերյալ.

- 1) բույսերի գիշատչությունը զարգացել է որպես ազոտի և այլ կարևոր տարրերի մշտական անբավարարության փոխատուցման ձև
- 2) գիշատիչները չեն կարող լինել երկրորդ կարգի կոնսումենտներ
- 3) գիշատիչ սնկերը չեն կարող ազդել հողում իրենց զոհերի՝ նեմատոդների թվաքանակի վրա
- 4) գիշատիչ բույսերը կարող են կարգավորել միջատների թվաքանակը

34

Ինչի՞ արդյունքում կարող է տեղի ունենալ նոր տեսակների առաջացում նախկին արեալի ներսում նույն տեսակի պոպուլյացիաներից.

- 1) կոնվերգենցիայի
- 2) աշխարհագրական մեկուսացման
- 3) մոդիֆիկացիոն փոփոխականության
- 4) էկոլոգիական մեկուսացման

35

Ի՞նչն է ընկած տեսակի ձևաբանական չափանիշի հիմքում.

- 1) սպիտակուցների և նուկլեինաթթուների կառուցվածքն ու կազմը
- 2) քրոմոսոմների թիվը
- 3) առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունները
- 4) տեսակի գրադեցրած արեալը

36

Կենդանի նյութի ո՞ր ֆունկցիայի հետ է կապված ծծմքի և երկարի հանքերի առաջացումը.

- 1) դեստրուկտիվ
- 2) կուտակող
- 3) միջավայրագոյացնող
- 4) էներգիական

(37-38) Սրտի բոլորաշրջանը տևում է 0,8 վրկ: Առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում նախասրտերի քուլացման տևողությունը կազմել է 14 րոպե:

37

Քանի՞ րոպե է կազմում նախասրտերի կծկման տևողությունը այդ ընթացքում.

- 1) 16
- 2) 14
- 3) 1,4
- 4) 2

38

Այդ ընթացքում քանի՞ լիտր արյուն է մղվել մեծ շրջանառություն, եթե մեկ փորոքի կողմից շրջանառություն մղված արյան ծավալը 70 մլ է.

- 1) 84
- 2) 168
- 3) 42
- 4) 70

(39-40) Ծնողներն ունեն արյան II և III խմբեր: Նրանց առաջին երեխան ուներ արյան I խումբ: Այդ ընտանիքում ծնվեցին երկագային երկվորյակներ:

39

Ինչպիսի՞ հավանականությամբ երկվորյակները կունենան արյան I խումբ.

- 1) 1\8
- 2) 1\16
- 3) 1\2
- 4) 1\4

40

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի արյան II խումբ ունեցող ծնողը.

- 1)  $I^A I^B$
- 2)  $I^0 I^0$
- 3)  $I^A I^A$
- 4)  $I^A I^0$

41

Գլխուղեղի կեղևի ո՞ր գոտին (նշված է ձախ սյունակում) կեղևի ո՞ր մասին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կեղևի գոտի

- A. հոտառական
- B. շարժողական
- C. խոսքի
- D. տեսողական
- E. մաշկամկանային զգայության
- F. լսողական

Կեղևի մաս

- 1. գագաթային բիլթ
- 2. ճակատային բիլթ
- 3. ծոծրակային բիլթ
- 4. քունքային բիլթ
- 5. քունքային բլթի ներքին մաս

42

Բաժանման ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) քջի բաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված են աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բաժանման պրոցես

- A. սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, տեղի է ունենում հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա և տրամախաչում
- B. ցենտրիուլները տարամիտվում են դեպի տարրեր քևեռներ, սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, հոմոլոգ քրոմոսոմներն առանձին-առանձին են
- C. հապլոիդ քվով երկրորմատիդային քրոմոսոմներն ապապարուրվում են
- D. հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են մեկ հարթության վրա՝ կողք կողքի
- E. տեղի է ունենում ցիտոպլազմայի բաժանում, ձևավորվում են դիպլոիդ բջիջներ
- F. հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց

Քջի բաժանման ձև և փուլ

- 1. միտոզի թելոֆազ
- 2. մեյոզի առաջին բաժանման թելոֆազ
- 3. մեյոզի առաջին բաժանման պրոֆազ
- 4. միտոզի մետաֆազ
- 5. միտոզի պրոֆազ
- 6. մեյոզի առաջին բաժանման մետաֆազ

43

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի մարդու օրգանիզմի կառուցվածքի առանձնահատկության (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ապացույցների (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

Կառուցվածքի առանձնահատկություն

Ապացույց

- A. Երրորդ կողի մնացորդ
- B. մաշկային մկաններ
- C. պոչի առկայություն
- D. կույր աղիքի որդաննան ելուստ
- E. պոչուկ
- F. դեմքի խիստ մազածածկույթ
- G. լրացույցի պտուկներ

- 1. ռուղիմենտ
- 2. ատավիզմ

44

Ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) օրգանիզմների բազմացման ո՞ր ձևին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

Բնութագիր

Բազմացման ձև

- A. կտրոններով բազմացում
- B. ինֆուզորիայի կոնյուգացիա
- C. կրկնակի բեղմնավորում
- D. զուսպորների առաջացում
- E. սերմերի առաջացում
- F. գամետների առաջացում
- G. կուսածնություն

- 1. անսեռ բազմացում
- 2. սեռական բազմացում

45

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ սյունակում) գեների միջև փոխներգործության ո՞ր բնույթին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: **Նշել** համապատասխանություններն ըստ հերթականության.

Հատկանիշ

Գեների փոխներգործության բնույթ

- |  |                            |
|--|----------------------------|
| A. ոլորի սերմերի ձևը   | 1. լրիվ դրմինանտություն    |
| B. զիշերային գեղեցկուիի ծաղկի գույնը                                 | 2. կողոմինանտություն       |
| C. մարդու արյան խումբը   | 3. գերդոմինանտություն      |
| D. բրախիդակտիլիան  | 4. ոչ լրիվ դրմինանտություն |
| E. ոլորի սերմերի գույնը  |                            |
| F. լոլիկի որոշ սորտերի բարձր<br>բերքատվությունը հետերոզիգոտ վիճակում |                            |

46

Ի՞նչ հաջորդականությամբ է մքնոլորտային քրվածինն անցնում մարդու բջիջներ՝ սկսած ներշնչման պահից: **Նշել** ճիշտ հաջորդականությունը.

1. քրվածնի անջատում հեմոգլոբինից
2. քրվածնի դիֆուզում ներքին օրգանի բջջի բջջաբաղանքով
3. օքսիհեմոգլոբինի փոխադրում արյան կազմում մեծ շրջանի անոթներով
4. օքսիհեմոգլոբինի առաջացում
5. օդի թափանցում թոքաբշտեր
6. քրվածնի դիֆուզում մազանոթների պատով
7. քրվածնի դիֆուզում թոքաբշտերի պատով

47

Ի՞նչ հաջորդականությամբ է ազդակն անցնում ռեֆլեքսային աղեղով մարդու օրգանիզմում: **Նշել** ճիշտ հաջորդականությունը.

1. ողնուղեղային հանգույց
2. ողնուղեղի առջևի եղջյուր
3. շարժողական նեյրոնի աքսոն
4. ներդիր նեյրոն
5. զգայական նեյրոնի դենդրիտ
6. գործառող օրգան
7. զգայական նեյրոնի աքսոն
8. ընկալիչ

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում
2. թրոմբի առաջացում
3. արյունատար անոթի պատի վնասում
4. ֆիբրինոգենի բնափոխում
5. թրոմբոցիտների քայլայում
6. ֆիբրինի առաջացում
7. թրոմբոցիտների հպում արյունատար անոթի անհարթ մակերևույթին

49

Ինչպիսի՞ն է արյունատար համակարգի անոթների ճյուղավորման հաջորդականությունը մարդու արտազատության համակարգում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. փոքր լուսանցքով երակի առաջացում
2. մազանոթների միացում
3. արտատար զարկերակի ճյուղավորում մազանոթների
4. մանր զարկերակների առաջացում
5. երիկամային զարկերակի ճյուղավորում
6. երիկամային երակի առաջացում
7. առբերող զարկերակի ճյուղավորում մազանոթների

50

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի նշված գործընթացների հաջորդականությունը.

1. գլյուկոզի առաջացում
2. ջրի ֆոտոլիզ (քայլայում)
3. գրգռված էլեկտրոնի անցում փոխադրիչ մոլեկուլի վրա
4. քլորոֆիլի մոլեկուլի վերականգնում
5. աստոմային ջրածնի առաջացում
6. քլորոֆիլի մոլեկուլց էլեկտրոնի անջատում
7. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում

51

Ինչպիսի՞ն է արյան հաջորդական ուղին ձկների արյունատար համակարգում՝ սկսած սիրտ մտնելու պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ներքին օրգանների մազանոքներ
2. փորոք
3. փորային առտա
4. դեպի սիրտ տանող երակներ
5. մեջքային առտա
6. նախասիրտ
7. խոհկային թերթիկների մազանոքներ

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Երկինտերողիզուտ առանձնյակների խաչասերման արդյունքում, զույգ ալելների լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է 9:3:3:1 ճեղքավորում՝ և՛ ըստ գենոտիպի, և՛ ըստ ֆենոտիպի
2. Վերլուծող խաչասերման ժամանակ անհայտ գենոտիպ ունեցող առանձնյակը խաչասերում են դոմինանտ գենով առանձնյակի հետ
3. Պլողովիլ պտղաճանճի աչքի զույնը սեռի հետ շղթայակցված հատկանիշ է, որը պայմանավորող գենը տեղակայված է Y քրոմոսոմում
4. Սորգանի օրենքը վերաբերում է գեների շղթայակցմանը
5. առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիզոտ է՝ ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիզոտ
6. Մենդելի անկախ բաշխման օրենքը վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող զույգ ալելային գեները գտնվում են տարրեր զույգ հոմոլոգ քրոմոսոմներում

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. սողունների հաստ աղին վերջանում է կտնառքով, որտեղ բացվում են արտազատական և սեռական օրգանների ծորանները
2. հողվածուտանինների խիստինային ծածկույթին առանձին խրձերի ձևով ամրանում են միջաձիգ-զոլավոր մկանները
3. կաթնասունների մազերը, սողունների թեփուկները, թռչունների փետուրները կազմված են եղջերային նյութից
4. ձկների ողնաշարում տարրերում են երեք բաժիններ՝ պարանոցի, իրանի, պոչի
5. կաթնասունների ձվարջի բեղմնավորումը տեղի է ունենում արգանդում
6. թռչունների կտցուկրերը ազատություն են տալիս թևերի շարժմանը
7. անձրևորդի կերակրափողի մեջ բացվում են կրային գեղձերի ծորանները

54

## Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. բուրն անգույն, թույլ թթվային ռեակցիա ունեցող հեղուկ է, որը մասնակցում է սպիտակուցների ճեղքմանը
2. ողնուղեղի կրծքային հատվածներից ուղարկվող նյարդային ազդակները հանգեցնում են մարսողական գեղձերի ծորանների նեղացմանը, մարսողական ուղու մկանունքի կծկումների բոլոր մասնակիցների հետ
3. ըմպանը մկանային օրգան է, որի պատերին գտնվում են լսողական փողերի անցքերը, որոնք կապում են ըմպանը ներքին ականջի խոռոչի հետ
4. կերակրափողը եռաշերտ պատերով սննամեջ խողովակ է
5. կլման ընթացքում մարսողական ուղու մուտքը փակվում է մակլուկորդով
6. պեպսինը և տրիպսինը գործում են թթվային միջավայրում, իսկ ամիլազը՝ հիմնային

55

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. կորիզահյութը իր քիմիական կազմով չի տարբերվում ցիտոպլազմայի բաղադրությունից
2. քրոմատինի հիստոնային սպիտակուցները հարուստ են արգինին և լիզին ամինաթթուների մնացորդներով, ինչը այդ սպիտակուցներին տալիս է թթվային հատկություններ
3. Գոլջիի ապարատը բնորոշ է բոլոր կորիզավոր բջիջներին և ունի ցանցանման կառուցվածք
4. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը ձողաձև է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը գնդիկային տեսքով կառույց է
5. քլորոֆիլը քիմիական կառուցվածքով պորֆիրին է, որի բաղադրության մեջ մտնում է երկարը
6. այն երևույթը, երբ բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջիջը այլ վիրուսի ներթափանցումից, կոչվում է ինտերֆերենցիա

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. արտաքինից միանման և միևնույն ֆունկցիա կատարող, բայց տարբեր ծագում ունեցող օրգանները կոչվում են հոմոլոգ օրգաններ
2. բնական էկոհամակարգերի կայունության հիմնական պատճառն է ներգիայի հոսքի և նյութերի շրջապտույտի հավասարակշռվածությունն է
3. բնական ընտրությունն ունի ուղղորդված բնույթ
4. կայունացնող ընտրությունը հանգեցնում է ռեակցիայի նորմայի փոփոխմանը մեկ որոշակի ուղղությամբ
5. մակրոէվոլյուցիայի հիմքում ընկած են ժառանգական փոփոխականությունը, գոյության կոհիվ և բնական ընտրությունը
6. դիվերգենցիան նոր տեսակների և դրանց հեռավոր նախնիների միջև սկզբում հազիվ նկատելի տարբերությունների անընդհատ մեծացող և խորացող գործընթաց է

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. էներգիական փոխանակության թթվածնային փուլում, երբ արոտոնային պոտենցիալը միտոքոնոֆիումների թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, ջրածնի արոտոններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ ներքին մակերևույթից դեպի թաղանթի արտաքին կողմը
2. ԴՆԹ-ի մեկ շղթայում նուկլեոտիդները միմյանց են միանում մեկ նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի և մյուսի ածխաջրային մնացորդի միջև առաջացող կովալենտ կապով
3. քջում ջուրը թթվածնի և ջրածնի աղբյուր է
4. գլյուկոզի՝ մինչև պիրոխաղողաթթվի ճեղքման արդյունքում անջատվում է 150 կԶ/մոլ էներգիա, որի մեծ մասը (60 %) վերածվում է ԱԵՖ-ի մակրոէրգիկ կապի էներգիայի, իսկ մյուս մասը (40 %) ցրվում է որպես ջերմային էներգիա
5. քլորոֆիլը հիմնականում կլանում է կարմիր և կապտամանուշակագույն լույսը, իսկ կանաչն անդրադարձնում է, որի պատճառով բույսերը հիմնականում կանաչ գույն ունեն
6. մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ բարձր խտություն՝ հատիկավոր էնդոպլազմային ցանցի կազմավորած սարկոպլազմային ցանցի շնորհիվ

58

**Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.**

1. բարթիչավոր մարմնի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորությունը
2. արյան ամենափոքր ճնշումը դիտվում է մազանոթներում
3. վահանաձև գեղձի հորմոնի անբավարարությունը մանկական հասակում առաջ է բերում զաճաճություն հիվանդությունը
4. ենթաստամոքսային գեղձի գլյուկազոն հորմոնն արյան մեջ գլյուկոզի հավելյալ քանակը դարձնում է գլիկոգեն
5. ոչ պայմանական ռեֆլեքսների իրականացման համար պարտադիր է գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի մասնակցությունը
6. բոքերը մկանային օրգաններ են, որոնք պասիվ կերպով հետևում են լայնացող կրծքավանդակի պատերին
7. կոկորդի ներքին պատը պատված է բարթիչավոր ծածկութային հյուսվածքով

59

**Փոքր լճակում ձկների քանակը որոշելու համար որսացել են 750 ձուկ, նշան արել և նորից բաց քողել լիճ: Որոշ ժամանակ անց որսացել են 2700 ձուկ, որից 54-ը նշված էին: Գտնել պոպուլյացիայի մոտավոր քվաքանակը:**

(60-61) Մարդը 48,816 մ<sup>3</sup> ծավալով աշխատասենյակում գտնվել է 10 ժամ: Այդ ընթացքում կատարել է ֆիզիկական աշխատանք 9 ժամ: Աշխատանքի ժամանակ շնչառական շարժումների հաճախականությունն աճել է 1,6 անգամ, շնչառական ծավալը՝ 1,5 անգամ, իսկ օրգանիզմում յուրացվող քրվածնի ծավալը աճել է 25%-ով: Ընդունել, որ սենյակը մեկուսացված է, հարաբերական հաճախտի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում:

60

Սենյակի օղի քանի՞ սոոկոսն է ներշնչել մարդը այդ 10 ժամվա ընթացքում:

61

Քանի՞ լիտր քրվածին է յուրացվել մարդու օրգանիզմում այդ 10 ժամվա ընթացքում:

(62-63) 200 օրվա ընթացքում (միջինը 15-ժամյա լուսային օր) ֆոտոսինթեզի պրոցեսում արտադրվել է 64 կգ  $O_2$ :

62

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

63

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը ( $\text{մ}^2$ ):

(64-65) Օրգանիզմում գլիկոլիզի ընթացքում անջատված ջերմային էներգիայի 21%-ը ծախսվել է 0,3 կգ քրտինք գոլորշիացնելու համար: Օրգանիզմում կուտակվել է 28 մոլ կաթնաբբու: Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաբբու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ և ԱԵՖ-ի մինչև ԱՎՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կՋ/մոլ էներգիա և 1 գ քրտինքի գոլորշիացման համար օրգանիզմը ծախսում է 2,45 կՋ էներգիա:

64

Քանի՞ մոլ CO<sub>2</sub> է առաջացել այդ պրոցեսի արդյունքում:

65

Որքա՞ն օգտակար էներգիա է կուտակվել (կՋ-ով) այդ պրոցեսի արդյունքում:

(66-68) Սպիտակուցի զանգվածը 74750 գ.ա.մ. է:

- 66 Քանի՞ անգամ է այդ սպիտակուցի սինթեզը կողավորող գենի զանգվածը գերազանցում սպիտակուցի զանգվածը, եթե մեկ ամինաքրվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 115 գ.ա.մ. է, մեկ նուկլեոտիդինը՝ 310 գ.ա.մ.։  
Պատասխանում պահպանել միայն ամբողջ թիվը:

- 67 Քանի՞ նմ է տվյալ գենի երկարությունը, եթե մեկ նուկլեոտիդի երկարությունը ԴՆԹ-ի շղթայում 0,34 նանոմետր է:

- 68 Քանի՞ աղենինային նուկլեոտիդ կա տվյալ գենում, եթե հայտնի է, որ գուանինային նուկլեոտիդների թիվը 2,9 անգամ մեծ է աղենինային նուկլեոտիդների թվից:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. մարդու կրծքավանդակում կողոսկրերը շարժում միացած են կրծոսկրին
2. միջոկողային և ստոծանու մկանների բուլացման ժամանակ կողոսկրերն ու ստոծանին իջնում են և տեղի է ունենում արտաշնչում
3. մարդու լրացուցիչ կմախքը կազմված է վերջույթների գոտիներից և ազատ վերջույթների կմախքից
4. միջաձիգ-զոլավոր մկանային հյուսվածքը կազմված է մանր, իլիկաձև, միակորիգ բջիջներից
5. ողնաշարի պարանոցային և սրբանային կորույթուններն ուղղված են դեպի առաջ
6. շարժման ընթացքում ավելի սակավաշարժ ուկրերին միացող ջիլն անվանում են մկանի պոչ, իսկ շարժում ուկրերին միացողը՝ մկանի գլխիկ

70

Օվոգենեզի վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. մեյոզի առաջին բաժանումից առաջանում են երկու անհավասար հապլոիդ բջիջներ
2. 1n2c հավաքակազմ ունեցող խոշոր բջիջը կոչվում է երկրորդ կարգի օվոցիտ, իսկ փոքր բջիջը՝ ուղղորդող մարմին
3. երկրորդ կարգի օվոցիտի երկրորդ բաժանումը մեյոզի ընթացքում կանգ է առնում ալրոֆազում և շարունակվում է մինչև վերջ միայն ձվագատման պահին
4. առաջին կարգի օվոցիտներն ունեն քրոմոտոմների 4n4c հավաքակազմ
5. ձվարանների բազմացման գոտու 2n2c հավաքակազմով բջիջները կոչվում են օվոգնիումներ
6. առաջին կարգի օվոցիտը միտոզով կիսվելով՝ վերածվում է երկրորդ կարգի օվոցիտի